## ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ՀՀ, քաղաք Երևան
«12» մարտի, 2025 թվական

Սույնով **<u>«ԳԱՐԱՆՏԻԱ-ՇԵՆ» ՍՊԸ-ն՝</u>** (գրանցված է ՀՀ-ում, պետական գրանցման համարը՝ 290.080.00743, ՀՎՀՀ-ն՝ 01807812, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Արգավանդ, Երկաթգծի 3-րդ փ. 16) (այսուհետ՝ Ընկերություն) ի դեմս Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Արսեն Պետրոսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, ***լիազորում է՝***

ՀՀ քաղաքացի Արևիկ Ղազարյանին (նույնականացման քարտ՝ 010913614, տրված 19.06.2019 թվականին, ՀԾՀ՝ 7305790303, գրանցման հասցե՝ ՀՀ ք. Երևան, Վիլնյուսի 25/94)

- Ընկերության անունից և/կամ փոխարեն որպես ներկայացուցիչ հանդես գալ Հայաստանի Հանրապետության բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, առևտրային, ոչ առևտրային և/կամ այլ տեսակի բոլոր այլ իրավաբանական անձանց առջև, բոլոր ֆիզիկական անձանց առջև, բոլոր պաշտոնատար անձանց առջև, վարելու բանակցություններ, կնքելու և/կամ լուծելու պայմանագրեր, համաձայնագրեր, ստորագրելու, ներկայացնելու և ստանալու փաստաթղթեր, ներառյալ նաև՝ դիմումներ, տեղեկանքներ, որոշումներ և ցանկացած այլ փաստաթղթեր, Ընկերության անունից և/կամ փոխարեն կատարել Ընկերությանը վերապահված ցանկացած այլ գործողություններ.
- Հասանելիություն ունենալ և ցանկացած ձևով ձեռք բերել, պահպանել, օգտագործել, տնօրինել բանկային, առևտրային, ապահովագրական և Ընկերությանը վերաբերող ցանկացած այլ գաղտնիք հանդիսացող կամ համարվող տեղեկատվությունը, փաստաթղթերը և ցանկացած այլ նյութերը, Ընկերության անունից և/կամ փոխարեն հանդես գալ ՀՀ առևտրային բոլոր բանկերում, ֆինանսական, վարկային կազմակերպություններում և կատարել Ընկերությանը վերապահված և/կամ Ընկերության կողմից կատարման ենթակա բոլոր տեսակի գործառնություններն ու գործողությունները, ազատորեն տնօրինել միջոցները, այդ թվում՝ բանկային հաշվին մուտքագրել կամ դուրս գրել դրամական միջոցներ, ստորագրել և/կամ ստանալ և/կամ ներկայացնել վճարման հանձնարարականներ, հանձնարարագրեր, չեկային թերթիկներ, փաստաթղթեր, ստանալ և/կամ տրամադրել ցանկացած տեսակի տեղեկություններ, ստորագրել պայմանագրեր, այդ պայմանագրերի լուծման, փոփոխման, լրացման համաձայնագրեր, ինչպես նաև կատարել Ընկերությանը վերապահված և/կամ Ընկերության կողմից կատարման ենթակա ցանկացած այլ գործողություն և/կամ օգտվել ցանկացած այլ բանկային ծառայություններից.
- Ստորագրել ընկերության անունից ցանկացած փաստաթուղթ, վճարել և ստանալ գումարներ, ինչպես նաև Ընկերության և/կամ նրա գործադիր մարմնի և/կամ նրա ղեկավարի անունից և/կամ փոխարեն կատարել բոլոր այն գործողությունները և լիազորությունները,

որոնք ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ կամ ցանկացած այլ հիմքով վերապահված են Ընկերությանը և/կամ նրա գործադիր մարմնին և/կամ նրա ղեկավարին և/կամ Ընկերության ներկայացուցչին:

*Լիազորագիրը տրվում է 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:*

ԼԻԱԶՈՐՈՂ՝

«ԳԱՐԱՆՏԻԱ-ՇԵՆ» ՍՊԸ-Ի
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ